

«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 1941-Լ

«24» նոյեմբերի 2025 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԱՐԿՂԻ ԳԱՆՁԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՐԹԱՓՈԽԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 528-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Թատրոնի տնօրենի 2024 թվականի ապրիլի 29-ի ««Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1408-Լ հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնների» 44-րդ կետի պահանջները՝

հրամայում եմ.

1. Թատրոնի հաշվապահական հաշվառման բաժնի տոմսարկղի գանձապահների համար սահմանել հերթափոխային աշխատանքային ռեժիմ՝ ապահովելով յուրաքանչյուր աշխատողի համար ոչ ավելի քան շաբաթական աշխատանքային 40 ժամը:
2. Թատրոնի հաշվապահական հաշվառման բաժնի տոմսարկղի աշխատանքային ժամերն են՝
ամեն օր ժամը 9:00-ից մինչև 20:30-ը:
Ընդմիջման ժամերն են՝
ա) դրսի տոմսարկղի համար՝ ժամը 12:00-ից մինչև 12:30-ը և 16:00-ից մինչև 16:30-ը,
բ) ներսի տոմսարկղի համար՝ ժամը 12:30-ից մինչև 13:00-ն և 16:30-ից մինչև 17:00-ն:
3. Սահմանել, որ հաշվապահական հաշվառման բաժնի տոմսարկղի գանձապահների համար հերթափոխային աշխատանքային ռեժիմի գրաֆիկը կազմվում է կիսամյակային կամ եռամսյակային կտրվածքով՝ ապահովելով աշխատողների աշխատանքների կատարման հերթափոխության համաչափությունը:
4. Սահմանել, որ հաշվապահական հաշվառման բաժնի տոմսարկղի գանձապահների համար հերթափոխային աշխատանքային ռեժիմի գրաֆիկը հաստատվում է Թատրոնի տնօրենի կողմից:

5. Թատրոնի տնօրենի 2024 թվականի ապրիլի 29-ի «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների աշխատանքային ռեժիմները սահմանելու մասին» N 528-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետից հանել «տոմսարկղի գանձապահների և» բառերը:

6. Հանձնարարել Թատրոնի ընդհանուր բաժնի պետին՝ սույն հրամանի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահական հաշվառման բաժնի տոմսային տնտեսության վարիչին, տոմսարկղի գանձապահներին:

7. Հանձնարարել Թատրոնի տոմսերի առցանց վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը մեկօրյա ժամկետում հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:


Թատրոնի տնօրեն՝



Կ. Դուրգարյան

ք. Երևան

«24» նոյեմբերի 2024 թ.



ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE